ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ.

2. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ.

Մայիսի 25 ին Ս. Էջմիածնի Մայր տաճարում գոհաբանական մաղթանք կատարուեցաւ ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿԱՑՍՐՈՒՀԻ Ա-ԼԷՔՍԱՆԴՐԱ ՖԷՕԴՈՐՈՎՆԱՑԻ ծննդեան տօնի առթիւ։ Հանդիսաւոր պատարագին և մաղթանքին ներկայ էին բոլոր միաբանութիւնը։ Գ. Ճեմարանի ուսուցչական խումբն ու աշակերտները, պաշտօնեայքև ժողովրդի խուռն բազմութիւնը։

Երեկոյեան մեծ ճրագալոյց կար Ս. Էջմիածնի բակում և Ճեմարանում, որ գեղեցիկ զարդարուած էր գոյն զգոյն դրօշներով։

Մաղթանքից յետոյ Ամենապ. Տ. տեղակալ Մեսրովբ արքեպիսկոպոսը հեռագրով յայտնեց Նորին Վեհափառութեան հանդիսաւոր մաղթանքի մասին։

—

Մայիսի 29 ին հանդիսաւոր տօնախմբութիւն կատարուեցաւ Վաղարշապատի Ս. Հռիփսիմեանց վկայարանում մասնակցութեամբ բոլոր միաբանութեան և Ճեմարանի և բազմաթիւ ուխտաւորների։

Նոյնպիսի հանդիսաւոր տօնախմբութիւն կատարուեցաւ մայիսի 30 ին Ս. Գայիանէի և յունիսի 1 ին Շողակաթի վանքերում։

—

Ս. Էջմիածնի աւագագոյն անդամներից Ատրպատականի առաջնորդ Բարձր Սուքիաս Սրբազան Պարզեանցը մայիսի վերջին Մայր Աթոռս ժամանեց և մի քանի օր հիւր մնալուց յետոյ, ուղևորուեց դէպի հարաւային Ռուսիոյ հանքային բուժավայրերն իւր ոսկրացաւը դարմանելու։ որի համար Վեհափառ Հայրապետից քառամսեայ արձակուրդ էր ստացել։

Նորին Բարձր Սրբազնութեան հետ Մայր Աթոռս վերադարձաւ արժ. Խաչիկ վարդապետը։ որին Վեհափառ Հայրապետը մի քանի ամիս առաջ Ատրպատական էր ուղարկել որոշեալ յանձնարարութեամբ։

Արժանապատիւ Խաչիկ վարդապետը թանգագին հնագիտական մի հարուստ ժողովածու է բերել Պարսկաստանից Նորին Վեհափառութեան հիմնարկած թանգարանի համար։ Արարատի առաջիկայ համարում կաշխատենք այդ հնագիտական հաւաքածուի ցանկն ու նկարագիրը տալ։

1. ՌՈՒՍԱՀԱՅՔ.

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄ.

Ինչպէս խմբագրութեանս հաղորդումեն, Տաթևի վանքի վանահայր արժ. Գրիգորիս վարդապետը պատրաստութիւն է տեսնում այդ պատկառելի սրբավայրի հազարամեակը տօնելու։

—

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԷՐԷԹԻ ԹԵՄ.

Ներսիսեան թեմական դպրանոցի տեսչի պաշտօնակատար Պ. Ց. Սաղաթէլեանը հրաժարական է տուել իւր պաշտօնից։ Հոգաբարձութիւնն ընդունել է այդ հրաժարականն և պատրաստումէ նոր տեսչի ընտրութիւն անել։ որի համար սակայն ստիպուած է սպասել Գերապատիւ Սրբազան առաջնորդի վերադարձին։

—

ՐԵՍՍԱՐԱԲԻՈՑ ԹԵՄ.

Թեմիս հոգևոր դպրանոցի համար տեսուչ է հաստատուած Պ. Գ. Զաբրլեանը։ որ երկար ժամանակ նոյն դպրոցի տեսչի պաշտօնակատար էր։

—Ազգիս Վեհափառ Հայրապետը Նոր Նախիջևանից մեկնելուս հաճել է մի մատանի ընծայել Նոր Նախիջևանցի տ. Կրասիլնիկեանցին։ որի տանը իջևանել էր Նորին Օծութիւնը։

—

ՏԱՃԿԱՀԱՅՐ.

Մեծաւ ուրախութեամբ տեղեկացանք որ Ամեն. Մատթէոս Պատրիարք կատարելապէս ապաքինելով։ Պատրիարքարանէ գնացել և զբաղումէ ընթացիկ գործերով։

—

Կ. Պոլսոյ ազգ. հիւանդանոցում ապուշների յատկացեալ յարկը։ որ վերջին երկրաշարժի պատճառաւ մեծապէս վնասուել էր։ վերաշինուել է ծախիւք Ցակոբեան Միքայէլ էֆէնտիի։ որ ընդ երկար հոգաբարձու եղած է երբեմն յիշեալ հիւանդանոցին և մեծ արդիւնքներ տուած։

Այս նոր բարեգործութեան առթիւ նոր հոգաբարձուք խմբովին գնալով նորա մօտ՝ շնորհակալութիւն են յայտնել։ որ ի պատասխանի խոստացել է ի հարկին նիւթապէս օժանդակել այդ ազգային հաստատութեան։

—

Պրուսայի կարևոր թեմն ընդ երկար առանց Առաջնորդի էր մնացել։ քանի որ Գեր. Բարթուղիմէոս եպիսկոպոս նախորդ Պատրիարքի օրով 3—4 տարիներէ ի վեր ի Պոլիս էր հաստատուած։ «Առաջնորդ Պրուսայու» տիտղոսը վերապահելով իրան։

Սրբազան Մատթէոս Պատրիարքն ուղելով վերջ տալ այդ դրութեան, Գեր. Հմայեակ եպիսկոպոսի յանձնարարել է շուտով մեկնիլ ի Պրուսա և կազմելով տեղւոյն կրօնական և քաղաքական ժողովներն, նոր Առաջնորդի ընտրութիւն կատարելու, եթէ Բարթուղիմէոս եպիսկոպոս դեռ շարունակել ուզէ իւր անուանական գիրքը։

Տիվրիկի վիճակին առաջնորդ ընտրուած Մամբրէ վարդապետ Բղնունիի պաշտօնն հաստատուած է Կ. Պոլսոյ Պատրիարքարանի կողմից, որը և ստացել է Օսմ. Կառավարութենից առաջնորդական դէր-ը (հրովարտակ)։

—

Գ. ՊԱՐԱԿԱՀԱՅԵՐ.

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹԵՄ.

Թեմիս Առաջնորդ Բարձր Սուքիաս Սրբազանը Հայրապետական հաճութեամբ իրեն տեղապահ է կարգել արժ. Գէորգ Վ. Սարաջեանին։

—

ՕՏԱՐ ՔԱՐՈԶՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԱԼՄԱՍՏԻ ՄԷՋ։

(Թղթակցութիւն)։

Այժմ Սալմաստի մէջ աշխատող օտար քարոզչութիւններէ (միսիոնարութիւններէն) կաթոլիկ Լազարիստ միաբանութեան ուղարկածն է, որ ամենէն առաջ ոտք դրած է Սալմաստի մէջ. մօտ կէս դարու առաքելութիւն մ'է դա և սահմանափակուած է միայն Ասորիների մէջ։ Սալմաստի ասորաբնակ Խոսրովա մեծ գիւղի մէջ Լազարիստ վանք մը և սեմինարիա մը հիմնուած է։ Իրենք, Խոսրովայի ասորիները, կաթոլիկ են, ունին սակայն իրենց առանձին հոգևոր պետը, որ Մուսուլի կաթոլիկ արքեպիսկոպոսութեան ենթարկուած է։ Սալմաստի կաթոլիկ ասորիների թիւը 400 տան կը հասնի։

Վենետկի Մխիթարեան Միաբանութիւնը 10 տարի կը լինի, որ մի առաքելութիւն հաստատեր է Սավրա Հայաբնակ գիւղի մէջ և այնտեղ հին ասորական մի եկեղեցի նորոգած, փոքրիկ վանք մը հիմնած է. Մխիթարեան միաբանները այնտեղ ունին ուսումնարան, ուր 8 գիշերօթիկ տղաներ (Որմիէն և Սալմաստի ուրիշ գեղերէն բերուած) և 6 ալ Սավրա գիւղացի երթևեկ աշակերտներ կը պահեն. իրենց տուած կրթութիւն տարրական ալ չի կրնար համարուիլ. վարժարանի մասին խնամք քիչ տարած են առաքելութեան անդամները, աւելի զբաղեալ լինելով իրենց յարած 3 տուն սավրացի հայերի և անոնց համագիւղացի լուսաւորչական ազգակիցների միջև ստեղծուած դատական խնդիրներով։ Սավրա գիւղէն դուրս գաւառին ուրիշ գիւղերի մէջ հաստատութիւն մը չունին և ոչ ալ իրենց յարած մի հայ ընտանիք. այդ երեք տունէ զատ ուրիշ 4 տուներ ալ կան սրանց, միայն մի կամ երկու անդամը վէճերի մէջ պաշտպանութիւն գտնելու յուսով, Վենետիկի Մխիթարեան առաքելութեան յարած են և կամ կը ցուցնեն ինքզինքնին։ Այդ միաբանութեան 2 վարդապետներ մշտապէս կը մնան Սավրա։

Ամերիկեան—երիցական եկեղեցին նոյնպէս 10 տարի կը լինի որ Սալմաստ ուղարկած է մի առաքելութիւն. Հաֆթուան գիւղ դոցա կեդրոնն է. այդտեղ կան երկու ամերիկացի միսիոնարներ և 2 ալ առանձին միսիոնարուհի, բացի ասորի և հայ քարոզիչներէ։ Ասոնք վարձու տուների մէջ հաստատուած են, դեռ իրենց սեփական շէնքեր չեն շինած։ Իրենց առաքելութիւն կը տարածուի նաև ասորիների և հրէաների մէջ, բայց փոքր աստիճանով ի Սալմաստ, իսկ շատ ընդարձակ ծաւալով Որմիի ասորիների մէջ։

Սալմաստի հետևեալ գիւղերի մէջ անոնք ունին ուսումնարաններ։

Հաֆթուան կը պահեն աղջկանց գիշերօթիկ մի վարժարան, տարրական ուսման և կրօնագիտութեան ծրագրով. 25-էն աւելի են գիշերօթիկ աղջիկներ, շրջակայ գեղերէն և գաւառներէն բերուած. Հաֆթուանէն ալ ունին 25 աղջիկ երթևեկ. այն աղջիկներ որ մինչև իսկ գրքի և թղթի փող չեն ուզեր կամ չեն կրնար վճարել, կը դիմեն միսիոնարական վարժարանը, ուր այդ նիւթեր ձրի կը տրուին ձրի ուսման հետ։ Այս ամեռ 30 մանչ տղաներ ալ մի տաք սրահի մէջ կրցան հաւաքել, և կրօնի դասեր տալ։ Տրիշկ գիւղի մէջ մի ուրիշ երկսեռ վարժարան ունին 20 աշակերտով։

Սալմաստի տեղական ազգ. վարժարանների բարեկարգուիլը առ այժմ սահմանափակած է միսիոնարութեան կրթական ասպարէզը։

Բացի ուսուցիչներէ, քարոզիչներ ալ ունին տեղացիներէ. մի ասորի հայախօս քարոզիչ Հաւթուանի մէջ և մի հայ քարոզիչ ալ Հին քաղաքի Հայերի մէջ կը գործեն. կին միսիոնարուհիներ ալ ընտանիքների մէջ այցելելով, հաւատի գործը կը ջանան տարածել։ Առ այժմ բողոքական հասարակութիւն չէ կազմուած. իրենց քարոզի և աղօթքի ժողովներին կը յաճախեն գլխաւորապէս իրենց ծառայութեան և պաշտօնների մէջ գտնուող անձեր, անոնց ընտանիք և շատ մօտ ազգականներ, 6—7 տան չափ։

Մեծ գիւղերի մէջ տեղական միջոցներով մինչև այժմ կարելի եղած է շատ պէտք չը թողուլ միսիոնարական կրթութեանը. սակայն աղքատ, կամ

դեռ արթնութիւն չունեցած գիւղեր, ուր կարելի չէ տեղացիներէ դրամ ստանալ վարժարանի ծախքերի համար, այդպիսի տեղեր միսիոնարութիւններ իրենց դրամական առատ միջոցներով դիւրութիւն կունենան ձրի վարժարաններ բանալու։

Թէև մինչև այժմ միսիոնարական գործունէութեան ծաւալման գլխաւոր արգելքը եղած է տեղացիներուն աւանդական խորշումը և եղած են շատ գիւղեր, ուր միսիոնարներ դիմեր և առաջարկեր են ձրի վարժարաններ բանալ, բայց տեղացիներէ մերժուած են, սակայն այդ խորշում իրերի բնական ընթացքովը և մանաւանդ միսիոնարներուն յամառ յարատևութեան առջև ժամանակին կը նուազի և միսիոնարները իրենց երկար համբերութեան արդիւնքը առատօրէն պիտի ստանան, եթէ միայն ազգային կրթական առաքելութիւնը աւելի զօրեղ կազմակերպութիւն չըստանայ, այդպիսի մի առաքելութիւն 20 ամիս կը լինի որ արդէն սկսուած է մի քանի անհատների նախաձեռնութեամբ. և ցարդ ձեռք բերուած արդիւնքը շատ քաջալերական է։

Մի ուրիշ միսիոնարութիւն մ՚ալ, անգլիական —եպիսկոպոսական, այս 3 տարի է, որ նոր հաստատուած է Սալմաստ, Իլա գիւղը, այդ միսիոնարութիւն իր գործ առ այժմ սահմանափակեր է նեստորական համարուած ասորիների մէջ և կաշխատի անոնց մէջ գրագիտութիւն ծաւալել, զգուշանալով զանոնք ուղղակի անգլիքան դաւանութեան հրաւիրելէ։ Սալմաստի մէջ նեստորական կոչուած հին եկեղեցուն պատկանող ասորիների թիւը 100 տան կը հասնի։

Միսիոնարների գլխաւոր յաջողութիւնը եղած է ասորիների մէջ. այդ մի բուռն ժողովուրդ (20—25000 շունչ Ատրպատականի մէջ) ամէն տեղ յօժարութեամբ կը հետևի այս կամ այն դաւանանքի միսիոնարութեան, գլխաւորապէս նիւթական շահեր փնտռելով անոնցմէ. ո և է քրիստոնեայ տարրի մէջ ձուլուելու խորշումը շատ քիչ է իրենց մէջ։ Իսկ հայը դեռ առ այժմ մեծամասնութեան մասին է խօսքս, աւելի կը յօժարի զոհողութիւն անել, և իր ազգային եկեղեցուն ու վարժարանին յարած մնալ, քան միսիոնարական ձրի կրթութենէն օգտուելէ։

Սակայն միսիոնարութիւններ իրենց դրամական անհամեմատ բարձր միջոցներին կրթնած, գործը, թէև դանդաղ, բայց միշտ առաջ կը տանին. այդ միսիոնարութիւններէ ամէնէն նոր հաստատուածն, անգլիքանը, որ դեռ 4 տարի է Որմիի ասորիների մէջ հաստատուելը և առ այժմ հասարակ նախակրթարաններ ունի միայն, 93—94 տարեշրջանի մէջ 3,995 անգլ. ոսկի ծախք ունեցած է, իսկ Սալմաստի, Խոյի և Որմիի բոլոր հայ վարժարանների տարեկան ծախքը 200 անգլիական ոսկիէն չանցներ։ Ցիշեալ ցուցակէն կը տեսնուի նաև, որ 8—14 տարեկան երկսեռ ուսանողների թիւը 1285 է. այդ հասակ նախակրթական ուսման հասակը կը ներկայացունէ. արդ բաղդատելով այդ թիւ նոյն դաւառի Թեմ. Տեսչութեան տեղեկագրի ցուցած ուսանողների թուի հետ, որ 455 է, կը տեսնուի որ ուսումնական հասակի տղայոց 1/3 էն աւելին վարժարան կը յաճախեն։

Մօտաւոր ուրիշ առթի թողով կրթական վիճակի աւելի մանրամասն թուեր հրատարակել, մի քանի ծանօթութիւններ ալ տանք եկեղեցական վիճակի մասին։

Սալմաստի հայաբնակ գիւղերէն 14-ը միայն քահանայ ունեցող եկեղեցի ունին. այդ եկեղեցիներէն եօթը հոգակալ քարաշէն հաստատութիւններ են, իսկ մնացածներն հողաշէն մատուռներ։ Քահանայների թիւը 19 է։ Եկեղեցական գրամագլուխներ և հաստատեալ կալուածներ չկան. իւրաքանչիւր եկեղեցի իր մոմի վաճառումի հասոյթէն ընթացիկ ծախքերը կը հոգայ. եթէ մի քիչ ալ բան կաւելնայ, ադով մի նորոգութիւն կը լինի և կամ դպրոցի շէնք մի կը շինուի։

Քահանաների տարեկան եկամուտը ամէնէն շատ ստացողին՝ 200 բուրլի կը լինի, իսկ միջին հաշուով 100—120 բուրլի, ադոնք մեծ մասամբ իրենց երկրագործական գրաղումներ ալ ունին։ Ընդ 19 քահանայներէ 3-ը միայն պարզ նամակ մը կամ խնդիր մը գրելու չափ հայերէն գիտեն, միւսներուն ուսումը աւելի շատ տարրական աստիճանի վրայ է։

Սալմասի մէջ միայն մէկ վանք կայ, Դէրիրի Ս. Աստուածածին, որ ունի մի փոքր մատուռ, 3 կտոր հողաշէն տուներ։ Թէև վարելահողը արօտատեղին ընդարձակ տարածութիւն ունին, սակայն այժմ անմշակ և ամայի կը մնան սահմանագլխի քիւրդ հրոսակներուն աւերմունքի երեսէն. այժմ 2 տուն երկրագործներ նոր զետեղուած են և կը փորձեն մի քիչ տեղ մշակել։

Դէրիրք վանքէն զատ 6 ուխտատեղի մատուռներ ալ կան, ուր տարին մէկ կամ երկու անգամ ժողովուրդը ուխտի կերթայ, իսկ ուրիշ ժամանակներ ամայի կը մնան։

Ա.